AMERIABANK

# 2023թ. առաջին կիսամյակի հաշվետվություն

Հունիս 30, 2023

# բովանդակություն


**ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ** 02

Ամերիաբանկ՝ համառոտ ակնարկ 03

2023թ. առաջին կիսամյակի հիմնական ցուցանիշները և ձեռքբերումները 04

2023թ. առաջին կիսամյակ՝ հակիրճ անդրադարձ 05

**ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ** 06

Ամերիաբանկի բիզնես-մոդելը և ռազմավարությունը 07

Արտաքին գործոններ. ՀՀ տնտեսությունը 11

Արտաքին գործոններ. ՀՀ մակրոտնտեսական ցուցանիշները 12

Բանկի միջնաժամկետ նպատակները 13

Ամերիաբանկի հիմնական ռազմավարական ձեռքբերումները 2023թ. առաջին կիսամյակի դրությամբ 14

**ՌԻՍԿԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ** 17

Հիմնական ռիսկեր 18

2023թ. առաջին կիսամյակի ամփոփ նկարագիր 22

**ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ** 23

Ուժեղ թիմ և կորպորատիվ մշակույթ 24

Կորպորատիվ կառավարման կառուցվածքը 25

Տնօրենների խորհուրդ 26

Տնօրենների խորհրդին կից կոմիտեներ 27

Տնօրինություն 28

**ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ** 29

**ՀԱՇՎԵՏՈՒ ԹՈՂԱՐԿՈՂԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ԱՆՁԱՆՑ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ** 34

# Ընդհանուր տեղեկություններ

# Ամերիաբանկ՝
# համառոտ ակնարկ

Ամերիաբանկը Հայաստանի առաջատար ֆինանսական հաստատությունն է և ՀՀ տնտեսական ոլորտի առավել նշանակալի դերակատարներից մեկը: Հանդիսանալով դինամիկ զարգացող ունիվերսալ բանկ՝ Ամերիաբանկն իր սպասարկման բազմաֆունկցիոնալ հարթակի միջոցով մատուցում է նորարարական բանկային ծառայությունների ընդարձակ փաթեթ՝ թվային պրոդուկտների հստակ շեշտադրմամբ: Բանկն առաջնորդվում է հաճախորդամետ քաղաքականությամբ՝ թվային ժամանակակից միջավայրում սպասարկման բարձր որակ և բանկային փորձառություն ապահովելու նպատակով:

Ամերիաբանկը որդեգրել է բիզնեսի պատասխանատու վարման քաղաքականությունը՝ նպաստելով Հայաստանի անցմանը դեպի կայուն ապագա:

# 2023թ. առաջին կիսամյակի
# հիմնական ցուցանիշները և ձեռքբերումները

## Ընդհանուր ակնարկ

- Կորպորատիվ, ներդրումային և մանրածախ բանկային ծառայություններ մատուցող առաջատար ունիվերսալ բանկը Հայաստանում
- Մեծ ներդրում Հայաստանի բանկային համակարգի զարգացման մեջ
- Ծարունակական գնահատանք և որակի ճանաչում հեղինակավոր միջազգային հաստատությունների կողմից
- Հնարավոր ամենաբարձր վարկանիշ՝ սուվերեն վարկունակության սահմանափակումների շրջանակներում

**25** մասնաճյուղ

**1556** աշխատակից

Բանկոմատների ամենամեծ ցանցը մայրաքաղաքում

vPOS տերմինալների խոշորագույն ցանցը երկրում

POS տերմինալների ամենամեծ ցանցերից մեկը երկրում




## Վարկանիշ

**S&P**

| | |
|---|---|
| Երկարաժամկետ | BB- |
| Կարճաժամկետ | B |
| Հեռանկարը | Կայուն |
| SACP | BB- |

**Moody's**

| | |
|---|---|
| Բանկային ավանդներ | Ba3/NP |
| BCA | ba3 |
| CRA | Ba2(cr)/NP(cr) |
| Հեռանկարը | Կայուն |

## Բաժնետիրական կառուցվածք



# 2023թ. առաջին կիսամյակ՝ հակիրճ անդրադարձ

**2023թ. 2-րդ եռամսյակի արդյունքները**

**840 մլրդ**
ՀՀ դրամի վարկեր*

**934 մլրդ**
ՀՀ դրամի ավանդներ**

**1,252 մլրդ**
ՀՀ դրամի ակտիվներ

**177 մլրդ**
ՀՀ դրամի սեփական կապիտալ

**1,075 մլրդ**
ՀՀ դրամի պարտավորություններ

**21.7 մլրդ**
ՀՀ դրամի շահույթ

- Կայուն ֆինանսավորման գծով չորս մրցանակ Global Finance ամսագրի կողմից՝
  - 2023թ. կայուն ֆինանսավորման գծով Հայաստանի լավագույն բանկ
  - 2023թ. ակնառու առաջնորդություն կայուն նախագծերի ֆինանսավորման գծով Կենտրոնական և Արևելյան Եվրոպայում
  - 2023թ. ակնառու առաջնորդություն կանաչ պարտատոմսերի գծով Կենտրոնական և Արևելյան Եվրոպայում
  - 2023թ. ակնառու առաջնորդություն անցումային/կայուն զարգացմանն ուղղված վարկերի գծով Կենտրոնական և Արևելյան Եվրոպայում
- Հայաստանի հեռահաղորդակցության ոլորտի առաջատար ընկերության՝ Team Telecom Armenia-ի բաժնետոմսերի տեղաբաշխողը՝ առաջնային հրապարակային տեղաբաշխման շրջանակներում
- Զուտ շահույթի բարձր ցուցանիշ՝ 21.7 մլրդ ՀՀ դրամի, որը 13.4%-ով բարձր է նախորդ տարվա ցուցանիշից:
- Բեռնաթափման ցուցանիշը և կանխիկ գործառնությունների գծով բեռնաթափման ցուցանիշը կազմել են համապատասխանաբար 98% և 82%, իսկ ինտերնետ-բանկինգի օգտագործման ցուցանիշը՝ 73%, ինչը 10 տոկոսային կետով բարձր է տարեվերջի ցուցանիշից:
- Հաճախորդների հավատարմության գործակիցը կազմել է 77.3%, իսկ հաճախորդների փորձառության գործակիցը***՝ 9.8:

* Առանց արժեզրկման մասհանումների, բայց ներառյալ առևտրի ֆինանսավորումը

**Ընթացիկ հաշիվներ, ժամկետային ավանդներ և պարտատոմսեր

***NPS՝ Հաճախորդների հավատարմության գործակից
CEI՝ Հաճախորդների փորձառության գործակից, որի առավելագույն արժեքը 10 է

# Ռազմավարական հաշվետվություն

# Ամերիաբանկի բիզնես մոդելը
# և ռազմավարությունը

Հաճախորդներին որակյալ բանկային և ներդրումային, այդ թվում նորարար թվային լուծումներով պայմանավորված ծառայություններ տրամադրելու նպատակով Բանկը սահմանել է հետևյալ առաքելությունը՝ ԲԱՐԵԼԱՎԵԼ ԿՅԱՆՔԻ ՈՐԱԿԸ՝

- տրամադրելով հաճախորդներին ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՈՐԱԿԻ ֆինանսական ծառայություններ և գործարար լուծումներ,
- իրականացնելով հասարակության ԲԱՐՕՐՈՒԹՅԱՆ համար նշանակալի բիզնես և սոցիալական ծրագրեր,
- ձևավորելով յուրահատուկ կորպորատիվ մշակույթ և միջազգային ընկերության զարգացման սեփական մոդել՝ ՄԻԱՎՈՐԵԼՈՎ ՀԱՋՈՂԱԿ ՄԱՐԴԿԱՆՑ,
- շարունակաբար ԱՎԵԼԱՑՆԵԼՈՎ մեր ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԱՐԺԵՔԸ:

Բանկի տեսլականն է՝ **լինել ֆինանսական և տեխնոլոգիական վստահելի միջավայր՝ առաջարկելով կյանքի որակը բարելավելու ամբողջական լուծումներ:**

Բանկն իր գործունեության ընթացքում առաջնորդվում է հետևյալ երեք հիմնական արժեքներով՝ հաճախորդների բավարարվածության բարձր մակարդակ, աշխատանքի ու սպասարկման բարձր որակ, արհեստավարժություն և թիմային ոգի: Հիմնվելով վերոնշյալ արժեքների վրա՝ Բանկը կշարունակի ձևավորել ՀՀ բանկային համակարգում բարձր արդյունավետությամբ աչքի ընկնող կառավարման համակարգ և ներդնել կառավարման մշակույթի նոր արժեքներ, որոնք ոչ միայն կնպաստեն Բանկի հետագա գործունեության բարելավմանը, այլ նաև օրինակելի մոդել կհանդիսանան այլ տնտեսվարողների համար:

Բանկը բիզնեսի զարգացման էական ուղղություններ է համարում.

- թվային ծառայությունների հետագա բարելավումը և բազմազանեցումը
- բանկային ծառայություններից հեռավար օգտվող հաճախորդների մասնաբաժնի ավելացումը

# Ամերիաբանկի բիզնես մոդելը
# և ռազմավարությունը (շարունակություն)

- գործառնական բանկային ծառայությունների կշռի ավելացումը
- սպասարկման բոլոր ուղիներով հաճախորդների բավարարվածության ավելացումը
- մանրածախ բիզնեսի զարգացումը՝ նպատակային ֆինանսավորման միջոցով
- ՓՄՁ ուղղության զարգացում
- անկանխիկ շրջանառության և գործիքների աճը

Իր գործունեության զարգացման ներկայիս փուլում Բանկն էլ ավելի է արժևորում տեղեկատվության և (կամ) վերլուծությունների հիման վրա որոշումների կայացման կարևորությունը: Այս առումով Բանկն իրականացնում է համապատասխան տեղեկատվական բազաների կառուցման և դրանց հիման վրա կիրառական վերլուծությունների ավելի ինտենսիվ իրականացման նախագծեր: Բացի տեղեկատվության կարևորումից, Բանկի ղեկավարության համար առանձնացվել են ռազմավարական ուշադրությանն արժանի **հիմնական անկյունաքարեր**.

- Լինել **շուկայի առաջատարը**. ապահովել մրցակիցների համեմատ առաջանցիկ օրգանական աճի տեմպեր և միևնույն ժամանակ շարունակել դիտարկել ոչ օրգանական աճի հնարավորությունները: Շուկայի առաջատար դիրքերը պահպանելու նպատակով Բանկն ակնկալում է առավել մեծ ուշադրություն դարձնել կապիտալի արդյունավետ օգտագործմանը և շարունակել խթանել գործառնական բանկային ծառայությունները: Ելնելով ներկայիս դեմոգրաֆիական իրավիճակից և հաշվի առնելով բանկային ծառայությունների ներկայիս ծածկույթը՝ Բանկը պլանավորում է էականորեն ավելացնել նոր հաճախորդների քանակը, էապես բարելավել գործող հաճախորդներին խաչաձև վաճառքները:
- Բարձրացնել **արդյունավետությունը**. ապահովել կապիտալի շահութաբերության պատշաճ, ինչպես նաև ծախսերի և եկամուտների հարաբերակցության գործակցի առավել ցածր մակարդակ: Արդյունավետության բարձրացման ապահովման նպատակով Բանկն իրականացնում է մի շարք նախագծեր, որոնք ուղղված են ներքին գործընթացների և գործառույթների ավտոմատացմանը, կառուցվածքային և բիզնես մոդելի օպտիմալացմանը:

# Ամերիաբանկի բիզնես մոդելը
# և ռազմավարությունը (շարունակություն)

- Ընդլայնել **թվայնացման** ծավալները. դառնալ հեռահար բանկային ծառայություններ մատուցող առաջատար բանկ՝ հնարավորինս ավտոմատացնելով գործընթացները: Բանկն արդեն իսկ իրականացնում է, ինչպես նաև ապագայում նախատեսում է իրականացնել մի շարք նախագծեր, որոնք մեծապես կնպաստեն թվային կապուղիների ընդլայնմանը, մի շարք պրոդուկտներ կթվայնացվեն: Այդ ամենը կնպաստի թվայնացման ծավալների ավելացմանը, ինչն էլ իր հերթին կհանգեցնի հաճախորդների փորձառության բարելավմանը:
- Ընդլայնել **հաճախորդների փորձառությունը**. լինել հաճախորդակենտրոն Բանկի գործունեության բոլոր ուղղություններում, ապահովել հաճախորդների լոյալության և հաճախորդների փորձառության ինդեքսի ամենաբարձր ցուցանիշները: Բանկը մշտապես ներդրումներ է կատարում Բանկի անձնակազմի վերապատրաստումների ուղղությամբ, ինչի արդյունքում կատարելագործվում են անձնակազմի հաղորդակցման հմտությունները և աճում է սպասարկման որակը: Այս բոլոր գործողությունները կնպաստեն հաճախորդների բավարարվածության բարձրացմանը:

Բանկի միջնաժամկետ քանակական և որակական նպատակները բխում են առաջատար ունիվերսալ բանկ դառնալու ռազմավարական զարգացման ուղղությունից, Բանկի առաքելությունից, ուժեղ և թույլ կողմերից:

Իր զարգացման ներկա փուլում Բանկը նաև առաջնահերթություն է տալիս **տվյալների վրա հիմնված որոշումների կայացմանը**: Այդ նպատակով Բանկը սկսել է ավելի ճկուն և համապարփակ դարձնել իր տվյալների բազաները՝ այսպիսով որոշումների կայացման հիմքում ավելի մեծ տվյալներ և ընդգրկուն վերլուծություններ դնելու նպատակով:

# Ամերիաբանկի բիզնես մոդելը
# և ռազմավարությունը (շարունակություն)

Բանկի գործունեությունը մեծապես պայմանավորվում է արտաքին միջավայրում տեղի ունեցող իրադարձություններով: Բանկը սեփական հաճախորդների կարիքները բավարարելու համար գործունեություն է ծավալում ինչպես ներքին, այնպես էլ արտաքին շուկաներում, ուստի Բանկի գործունեության վրա ազդում են և՛ հայրենական, և՛ միջազգային շուկաներում տեղի ունեցող իրադարձությունները:

Արտաքին գործոնների հետ կապված իրավիճակի կայունացման հեռանկարները դեռևս մնում են մշուշոտ՝ բարձր գնաճի, տոկոսադրույքների շարունակական բարձրացման և աճող անորոշությունների ֆոնին: Համաշխարհային տնտեսությունը բախվում է ցածր աճի երկարատև շրջանի ռիսկին, և խոշոր տնտեսությունների մեծ մասում հիմնական առաջնահերթությունը մնում է գնաճի դեմ պայքարը՝ միաժամանակ ապահովելով ֆինանսական կայունությունը:

Բանկի գործունեության վրա էական ազդեցություն ունեցող հիմնական արտաքին գործոններն են.

- Ռուս-ուկրաինական կոնֆլիկտով պայմանավորված համաշխարհային տնտեսության, այդ թվում՝ հիմնական առևտրային գործընկերների անկայուն տնտեսական իրավիճակը, դեռևս պահպանվող անորոշությունն ու աշխարհաքաղաքական ռիսկերը:
- Համաշխարհային գնաճի բարձր տեմպերը: Չնայած պարենի և էներգակիրների գները վերջին մեկ տարում զգալի նվազել են, և համաշխարհային տնտեսության վրա ինֆլյացիոն ճնշումները որոշակի թուլացել են, այդուհանդերձ կանխատեսվում է, որ շատ երկրներում գնաճը դեռևս կմնա կենտրոնական բանկի թիրախներից շատ ավելի բարձր:
- Միջազգային ֆինանսական շուկաներում տոկոսադրույքների շարունակական աճը. կենտրոնական բանկերը շարունակում են զսպող քաղաքականության իրականացումը՝ կենտրոնանալով գների կայունության վերականգնման և ֆինանսական վերահսկողության ու ռիսկերի մոնիթորինգի ուժեղացման վրա:
- Համաշխարհային ֆինանսական համակարգում պայմանների խստացումը՝ պայմանավորված տարեսկզբին ամերիկյան և շվեյցարական բանկային համակարգերում գրանցված ցնցումներով:

Չնայած արտաքին տնտեսական մարտահրավերներին՝ Հայաստանի տնտեսության դինամիկան բարձր աճը միտում ունի, ինչը դրական նախադրյալներ է ստեղծում Բանկի հետագա օրգանական աճի համար: 2023թ.-ի հունվար-հունիսին տնտեսական ակտիվության ցուցանիշը կազմել է 11.4%: Միջազգային կազմակերպությունների վերջին կանխատեսումների համաձայն՝ 2023թ. ՀՀ ՀՆԱ աճը կկազմի 5-6%: ՀՀ ԿԲ կանխատեսում է 6.9% տնտեսական աճ 2023 թ. համար: Ինֆլյացիոն ճնշումները զգալի թուլացել են, և 2023թ. առաջին կիսամյակում 12-ամսյա գնաճը կազմել է 4.2%, ընդ որում, միայն հունիս ամսին գրանցվել է 0,5% գնանկում:

# Արտաքին գործոններ. ՀՀ տնտեսությունը

## Ընդհանուր տեղեկություններ

ՀՆԱ՝ 19.5 մլրդ (2022, ԱՄՆ դոլարի ընթացիկ փոխարժեքով)
Մեկ շնչին բաժին ընկնող ՀՆԱ-ն՝ 6.57 հազար (2022, ԱՄՆ դոլարի ընթացիկ փոխարժեքով)
Moody's-ի վարկանիշ՝ Ba3 (կայուն)
Fitch-ի վարկանիշ՝ BB- (կայուն)
S&P վարկանիշ՝ BB- (կայուն)

## Դիվերսիֆիկացված տնտեսություն

ՀՆԱ-ի կառուցվածքն ըստ արտադրության ճյուղերի*




*Վերջին 4 եռամսյակը

## ՀՆԱ-ի բարձր միջին աճ և ցածր գնաճ

2013-2022




## Ամենակայուն արժույթը տարածաշրջանում

(ԱՄՆ դոլարի նկատմամբ տարածաշրջանի այլ արժույթների փոխարժեքների դինամիկա)**




**Փոխարժեքի օրական տատանումները՝ որպես հիմք ընդունելով 2014թ. հունվար ամիսը
Աղբյուր՝ Bloomberg

# Արտաքին գործոններ. ՀՀ մակրոտնտեսական ցուցանիշներ

**AMD/USD (միջին օրական)**




**AMD/EUR (միջին օրական)**




**AMD/RUB (միջին օրական)**




**Ընթացիկ վճարային հաշվեկշիռ***




**Արտահանում և ներմուծում**




**Միջազգային պահուստներ**




**Մասնավոր փոխանցումներ****




**ՍԳԻ (12 ամիս)**




**Տնտեսական ակտիվության ինդեքս (12 ամիս)**




## Հիմնական ցուցանիշները

- 2023թ. սկզբում Հայաստանի տնտեսական ակտիվությունը բարձր ցուցանիշներ գրանցեց, սակայն հետագայում աճը դանդաղեց՝ պայմանավորված նախորդ տարվա տնտեսական ակտիվության բարձր ցուցանիշի բազային էֆեկտով: 2023թ. հունվար-հունիս ամիսներին տնտեսական ակտիվության ինդեքսը (ՀՆԱ-ի աճն արտահայտող ցուցանիշը) կազմել է 11.4%, ինչը մի փոքր ցածր է նախորդ տարվա նույն ժամանակահատվածի ցուցանիշից: Աճի հիմնական խթաններն էին ծառայությունների ու առևտրի ոլորտները և շինարարությունը: Արդյունաբերության (մասնավորապես արտադրության) և գյուղատնտեսության ոլորտները նույնպես նպաստել են տնտեսական գործունեությանը՝ թեև ավելի փոքր ծավալով:
- Գնաճը շարունակել է թուլանալ դրամավարկային քաղաքականության խստացման հետաձգված ազդեցության, դրամի արժևորման, ներմուծվող սննդամթերքի և տրանսպորտի գների շնորհիվ: 2022թ. վերջում 8.6% գագաթնակետին հասնելուց հետո 2023թ. վեց ամսվա ընթացքում գնաճը նվազել է՝ կազմելով 4.2%, ինչը 3 տոկոսային կետով ցածր է 2023թ. 1-ին եռամսյակի ցուցանիշից: Այն շարունակում է մնալ ամենացածր ցուցանիշը տարածաշրջանում: Հիմնական գնաճի ցուցանիշը նույնպես նվազում է՝ 2023թ. 1-ին եռ. 8%-ից իջնելով մինչև 1.5% հունիս ամսին (տարեկան կտրվածքով):
- Արտաքին առևտուրը և դրամական փոխանցումները գրանցել են բարձր տարեկան աճ: Ակնկալվում է, որ ընթացիկ հաշվի պակասուրդի ցուցանիշը մի փոքր կաճի, սակայն այն ամեն դեպքում ցածր է պատմականորեն գրանցված միջին ցուցանիշներից: Սա հիմնականում պայմանավորված է ներմուծման ծավալների աճով, որը գրանցվել է ներքին բարձր պահանջարկի արդյունքում:
- 2023.թ 1-ին կիսամյակի արդյունքներով ՀՀ դրամն ԱՄՆ դոլարի նկատմամբ արժևորվել է 16.8%-ով 2022թ. 1-ին կիսամյակի համեմատ (միջին օրական փոխարժեքով), սակայն վերջին ամիսներին փոխարժեքը կայուն է եղել:
- Արձանագրվել է միջազգային պահուստների զգալի կուտակում՝ տարեկան 13% աճով:

Աղբյուր՝ ՀՀ Վիճակագրական կոմիտե, ՀՀ ԿԲ

* Թարմացված տվյալները դեռևս առկա չեն:
**Փոխանցումները ներառում են ֆիզիկական անձանց՝ բանկերի միջոցով կատարվող ընդհանուր առևտրային և մասնավոր փոխանցումները:

# Բանկի միջնաժամկետ նպատակները

| | Միջնաժամկետ նպատակներ | Փաստացի |
|---|---|---|
| Կապիտալի եկամտաբերություն | > 12% | 25.3% |
| Ծախսերի հարաբերությունը եկամտին | < 40% | 39.9% |
| Վարկային պորտֆելի տարեկան աճ | երկնիշ | 22% |
| Մանրածախ + ՓՄՁ մասնաբաժինը | > 40% | 62.5% |
| Մանրածախ + ՓՄՁ տարեկան աճը | > 15% | 25% |
| Խնդրահարույց վարկեր | < 5% | 1.9% |

# Ամերիաբանկի հիմնական ռազմավարական ձեռքբերումները
## 2023թ. առաջին կիսամյակի դրությամբ

### Հաճախորդակենտրոն թվային էկոհամակարգեր




**50% տարեկան**
**Մոբայլ և ինտերնետ -բանկինգ համակարգերի օգտատերեր**

**87% տարեկան աճ**
**Գործարքներ մոբայլ և ինտերնետ-բանկինգ համակարգով**

**49%**
**Թվային ուղիներով վաճառքների մասնաբաժին**

**98%**
**Բեռնաթափման ցուցանիշ***

### Ինտերնետ-բանկինգի օգտագործման գործակից




### Կանխիկ գործառնությունների գծով բեռնաթափման ցուցանիշ**






* Հեռավար և թվային ուղիներով կատարված անկանխիկ գործարքների մասնաբաժինը բանկի կողմից կատարված անկանխիկ գործարքների ընդհանուր թվում
** Հեռավար և թվային ուղիներով կատարված գործարքների մասնաբաժինը բանկի կողմից կատարված գործարքների ընդհանուր թվում

# Ամերիաբանկի հիմնական ռազմավարական ձեռքբերումները
## 2023թ. առաջին կիսամյակի դրությամբ
(շարունակություն)

| | Ընթացիկ կարգավիճակ | Միջնաժամկետ նպատակներ |
|---|---|---|
| Հաճախորդների գերազանց սպասարկում եւ բարձր բավարարվածություն | 77.6%<br>**Հաճախորդների հավատարմության գործակից** | ≥ 70% |
| | 9.6<br>**Հաճախորդների փորձառության գործակից** | ≥ 9.3 |
| Առցանց շուկայական հարթակներ/ էկոհամակարգեր | **Ներդրված էկոհամակարգեր**<br>• Ավտոշուկա<br>• Անշարժ գույքի շուկա<br>• Էլեկտրոնային առևտուր<br>• ՓՄՁ էկոհամակարգեր | **Էկոհամակարգերի շուկայի ծածկույթի գործակից**<br>≥ 50% |
| Աշխատակիցների բավարարվածություն եւ բարեկեցություն | 82%<br>**Աշխատակիցների բավարարվածության գործակից** | ≥ 80% |

# Ամերիաբանկի հիմնական ռազմավարական ձեռքբերումները
## 2023թ. առաջին կիսամյակի դրությամբ (շարունակություն)

**Կայունության ապահովման ռազմավարություն**

**Երկարաժամկետ պարտավորություն** ստեղծելու կայուն միջավայր և աջակցելու մեր հաճախորդներին չեզոք ածխածնային տնտեսությանն անցնելու գործում:

**Կանաչ պարտատոմսերի թողարկում**

- **Կանաչ պարտատոմսերի** առաջին թողարկողը Հայաստանում
- Կանաչ պարտատոմսերի թողարկում՝ **62* մլն ԱՄՆ դոլարի**

**Տեղաբաշխում**




**Ազդեցություն****

**116,144 տոննա**
ածխաթթու գազի արտանետումներից խուսափում

**286,232,459 կՎտ-ժ**
արտադրված մաքուր էներգիայի ընդհանուր տարեկան ծավալ

**Բիզնեսի պատասխանատու վարում եւ ներդրում հասարակության բարօրության գործում**

- **ՇԵԱՍ ռիսկերի կառավարում** լավագույն փորձին համապատասխան
- **2022թ. ԿՍՊ ծրագրերին հատկացվել է 180 մլն ՀՀ դրամ:**

**գրեր**

Երեխաների առողջություն ու բարեկեցություն

Կրթական ծրագրեր

Ենթակառուցվածքի և համայնքի զարգացման ծրագրեր

*42 մլն եվրո, 3 մլրդ ՀՀ դրամ, 8 մլն ԱՄՆ դոլար
**Կանաչ պարտատոմսերի ազդեցության մասին 2022թ. հաշվետվություն

# Ռիսկերի կառավարում

# Հիմնական ռիսկեր

## Մակրոտնտեսական ռիսկեր

2023թ.-ի առաջին կիսամյակում ՀՀ տնտեսությունը գործել է արտաքին միջավայրի դանդաղ տնտեսական աճի և մեղմացող գնաճի պայմաններում: Համաշխարհային տնտեսական աճի տեմպերի դանդաղումը մասամբ պայմանավորված է աշխարհաքաղաքական անորոշությունների բարձր մակարդակով և գների նվազմանը ուղղված զսպող դրամավարկային քաղաքականություններով: Չնայած գնաճի դանդաղմանը՝ դեռևս ակնկալվում է զսպող դրամավարկային քաղաքականություն ՀՀ հիմնական գործընկեր երկրներում՝ պայմանավորված առկա աշխարհաքաղաքական անորոշություններով և գործազրկության մակարդակի նվազումից առաջացած գնաճային հավելյալ ճնշումներով, ինչը կարող է հանգեցնել հիմնական նպատակային տոկոսադրույքների ներկայիս բարձր մակարդակի պահպանմանը: ՀՀ-ում տնտեսական աճի բարձր տեմպը շարունակվում է: Տնտեսական աճին նպաստող հիմնական գործոններից են արտաքին շուկայից ծառայությունների նկատմամբ բարձր պահանջարկը և շինարարության ոլորտում գրանցած աճը: Տնտեսական աճին զուգահեռ նաև էականորեն նվազել է գնաճը: Մինչև տարեվերջ մակրոտնտեսական միջավայրի սպասումներում առկա են անորոշություններ՝ կապված աշխարհաքաղաքական իրավիճակի հետագա զարգացումների, ՀՀ տնտեսության վրա էական ազդեցություն ունեցող երկրներում սպասվող տնտեսական աճի տեմպերի, դրամավարկային քաղաքականությունների միտումների հետ: (ՀՀ մակրոտնտեսական ցուցանիշների մասին առավել մանրամասն ծանոթանալու համար տե՛ս «Ռազմավարական հաշվետվություն» բաժինը):

Ամերիաբանկը 2023թ.-ի առաջին կիսամյակում գործում էր սահմանված ռիսկի ախորժակի շրջանակներում. ամենահավանական սցենարներով հաշվարկած սթրես թեստերը և կանխատեսումները ցույց են տալիս, որ 2023 թվականի ընթացքում ռիսկերի մակարդակը չի գերազանցի նախանշված սահմանաչափերը՝ տնտեսական իրավիճակին համահունչ սահմանված ֆինանսական թիրախային ցուցանիշների ապահովման դեպքում:

## Վարկային ռիսկ

Ամերիաբանկի չաշխատող վարկերի ցուցանիշը (ըստ ՖՀՄՍ մեթոդաբանության) նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի համեմատ բարելավվել է 1.0 տ.կ-ով և կազմել է 1,9%, որը չի գերազանցում Բանկի կողմից սահմանված ընդունելի մակարդակը և բանկային համակարգի համապատասխան ցուցանիշը: Կորպորատիվ վարկերի պորտֆելում այդ ցուցանիշը կազմել է 2.1%, իսկ մանրածախ վարկերի պորտֆելում՝ 1.7%: Երկու պորտֆելների գծով տեղի է ունեցել ցուցանիշի բարելավում: Հավանական վարկային ռիսկերի գծով Բանկի կողմից ստեղված է համապատասխան պահուստ՝ ծածկման գործակիցը կազմում է 88.9%:

Վարկավորման ընթացքում Բանկի կողմից կիրառվող ռիսկի զսպման գործիքները, ինչպիսին են ոլորտային և պրոդուկտային դիվերսիֆիկացիան, արտարժութային վարկերի ռիսկի հեջավորումը, վճարունակության ցուցանիշների նվազագույն արժեքները, թույլ տվեցին ապահովել պորտֆելի որակի կայունությունը:

# Հիմնական ռիսկեր (շարունակություն)

## Շուկայական ռիսկեր

2023թ.-ի առաջին կիսամյակի արդյունքներով շուկայական ռիսկերից առաջացած վնասները չեն գերազանցել տվյալ գծով սահմանված ռիսկի ախորժակը: Տարեսկզբից շուկայական բաց դիրքերի վերագնահատումների հանրագումարը եղել է դրական:
Բացասական վերագնահատումների աղբյուրները եղել են արտարժութային և տոկոսադրույքի ռիսկերը:
Արտարժութային բաց դիրքի բացասական վերագնահատումների շոշափելի մասը առաջացել է ԱՄՆ դոլարի՝ Դրամի նկատմամբ կտրուկ տատանումների հետևանքով, սակայն կուտակված վնասները ծածկվել են փոխարկումների արդյունքում գոյացած հավելյալ եկամտաբերությամբ: Բաց արտարժութային դիրքերը բացարձակ մեծությամբ միջինում չեն գերազանցել Բանկի կապիտալի 5%-ը, իսկ գնահատված սպասվող ռիսկը չի գերազանցել հատկացված ռիսկի ախորժակի 20%-ը:
Վերագնահատվող արժեթղթերի պորտֆելի տարեսկզբից կուտակային վերագնահատումը եղել է դրական՝ մեծամասամբ պայմանավորված ՀՀ դրամային և արտասահմանյան պետական արժեթղթերի մինչև մարում եկամտաբերությունների նվազմամբ: Արժեթղթերի պորտֆելի ռիսկը 2023թ. առաջին կիսամյակում կառավարվել է սահմանափակ դյուրացիայի (~2.6 տարի) և սահմանափակ կենտրոնացումների պայմաններում: Բանկի արժեթղթերի պորտֆելը բաղկացած է առավելապես ՀՀ և արտասահմանյան բարձր վարկանիշ ունեցող պետական պարտատոմսերից (շուրջ 91%), ինչն էապես նվազեցնում է պորտֆելում վարկային ռիսկը:
Տոկոսադրույքի ռիսկից առաջացած ոչ էական (ոչ ավելի, քան կապիտալի 0.01%) վնասներ կուտակվել են փոփոխվող տոկոսադրույքով բաց դիրքերի վերագնահատումից՝ պայմանավորված հիմքում ընկած տոկոսադրույքի՝ Բանկի համար անբարենպաստ փոփոխությամբ: Վերագնահատումները կառավարվում են բաց դիրքերի վրա գործող սահմանափակումների, ինչպես նաև հեջավորող ածանցյալ գործիքների միջոցով: 2023թ.-ի առաջին կիսամյակում էականորեն նվազել է փոփոխվող տոկոսադրույքով ակտիվների և պարտավորությունների ճեղքվածքը:
Տոկոսադրույքի ռիսկի տեսանկյունից առկա են որոշակի անորոշություններ՝ պայմանավորված աշխարհաքաղաքական զարգացումների և դրանց հետևանքով օտարերկրյա Կենտրոնական Բանկերի կողմից դրամավարկային քաղաքականության խստացմամբ: Մյուս կողմից, գնաճային դրական միտումներով պայմանավորված, միջնաժամկետ հորիզոնում հավանական է դրամավարկային քաղաքականության մեղմացում ՀՀ գործընկեր երկրներում: Քանի որ տեղական շուկաները դեռևս մասամբ են արձագանքել միջազգային շուկաներում տոկոսադրույքների բարձրացմանը, տեղական տոկոսադրույքների բարձրացում կարող է դիտարկվել: Տոկոսադրույքի ռիսկի կառավարման համակարգի հիմնական տարրերն են՝ ռիսկի ախորժակի սահմանաչափերը, զգայունության գնահատման համակարգը, ներքին պարամետրերը և նորմատիվները, ինչպես նաև ահազանգման և գործողությունների համակարգը:

# Հիմնական ռիսկեր (շարունակություն)

## Իրացվելիության ռիսկ

Իրացվելիության բոլոր գործակիցներն սպասվող ամենահավանական սթրեսային սցենարների դեպքում համապատասխանում են ՀՀ ԿԲ-ի կողմից սահմանված պահանջներին: 2023թ.-ի առաջին կիսամյակում իրացվելիության ռիսկը ոչ էական էր և զսպվում էր ընդհանուր ռիսկի պարամետրերի համակարգի շրջանակներում: Հաշվետու ժամանակաշրջանի դրությամբ Բանկի ավելցուկային իրացվելիության մակարդակը կազմել է շուրջ 75 մլրդ դրամ, ինչն ապահովում է ներքին և արտաքին նորմատիվների մակարդակների պահպանում սթրեսային սցենարների դեպքում, որոնք սակայն ունեն փոքր հավանականություն՝ ներկայիս մակրոտնտեսական միջավայրի և սպասումների պայմաններում:

## Գործառնական ռիսկեր

Ներքին գործընթացների կարգավորման և վերահսկման շնորհիվ բանկը գործառնական ռիսկը պահում է ցածր մակարդակի վրա: 2023թ. 1-ին կիսամյակի կրած ընդհանուր գործառնական վնասը չի գերազանցել Բանկում գործառնական վնասի համար սահմանված կորուստների ընդունելի չափի 1%-ը:

Համաշխարհային տնտեսական միջավայրի անբարենպաստ զարգացումների, հնարավոր սցենարների վերլուծության, ռիսկերի գնահատման և կառավարման ուղղությամբ շարունակական գործողություններ են իրականացվում բանկի Արտակարգ իրավիճակում գործարար գործընթացների անընդհատության կառավարման քաղաքականության և Ամերիաբանկ ՓԲԸ ֆինանսական վիճակի էական վատթարացման դեպքում ֆինանսական վիճակի բարելավմանն ուղղված վերականգնման ծրագրի համաձայն:

Բանկի գործընթացները, պրոդուկտները, համակարգերը հիմնականում գտնվում են ընդունելի գործառնական ռիսկի պայմաններում:

Երկարաժամկետ հորիզոնում էական գործառնական ռիսկի աղբյուր է շարունակում մնալ կիբերհանցագործությունների ավելացումը ամբողջ աշխարհում, որը թիրախավորում է առաջին հերթին հենց բանկային ոլորտը: Համացանցի և բջջային հավելվածների միջոցով իրականացվող առևտրի ծավալի աճին զուգահեռ ողջ աշխարհով մեկ աճում է նաև քարտային զեղծարարությունների և ֆիշինգային հարձակումների թիվը:

# Հիմնական ռիսկեր (շարունակություն)

Բանկային բիզնեսի թվային վերափոխման միտումներով պայմանավորված՝ հնարավոր է նաև գործառնական ռիսկերի և տեղեկատվական անվտանգության ռիսկերի հետ կապված դեպքերի քանակային աճ: Այս ռիսկերի արդյունավետ կառավարման նպատակով ուշադրության կենտրոնում են շարունակում մնալ տեղեկատվական տեխնոլոգիաները, ՏՏ անվտանգության ապահովման մեխանիզմները, տեղեկատվական անվտանգության կառավարման համակարգերը, ընթացիկ պրոյեկտները և նոր ներդրված համակարգերը:

## Շրջակա միջավայրի և սոցիալական ռիսկեր

Ամերիաբանկ ՓԲԸ-ը, կարևորելով շրջակա միջավայրի և սոցիալական ռիսկերի կառավարումը, իր գործունեության ընթացքում ապահովում է շրջակա միջավայրի և սոցիալական օրենսդրական պահանջների համապատասխանություն և միջազգային լավագույն փորձի ներդրում: Բանկը շարունակել է նաև Կանաչ վարկերի ֆինանսավորումը, մասնավորապես վերականգնվող էներգիային ոլորտում:
Բանկի կողմից ֆինանսավորվող ծրագրերի գնահատումն իր մեջ ներառում է նաև շրջակա միջավայրի և սոցիալական ռիսկերի գնահատում, ինչի արդյունքում Բանկի վարկային պորտֆելի շրջակա միջավայրի և սոցիալական ռիսկերը գտնվում են կառավարելի մակարդակում: Բանկի կողմից չեն ֆինանսավորվում այն ծրագրերը, որոնցում առկա են շրջակա միջավայրի կամ սոցիալական էական ռիսկեր, ինչպես նաև օրենսդրությամբ և միջազգային ստանդարտներով սահմանված արգելված գործունեություն:

## Այլ ռիսկեր

Բանկի ֆինանսական վիճակի վրա հաշվետու ժամանակաշրջանում էական ազդեցություն չեն գործել համբավի, իրավական և բիզնես մոդելի (մարտավարության) ռիսկերը: Ծնորհիվ Բանկում ներդրված գործընթացների՝ համակարգերի նշված ռիսկերը կառավարվել են պատշաճ մակարդակով, և բացասական սպասումներ ընթացիկ տարվա ընթացքում չեն ձևավորվել:

# 2023թ. առաջին կիսամյակի ամփոփ նկարագիր

2023թ.-ի առաջին կիսամյակում բանկը գործել է սահմանված ռազմավարական ռիսկի ախորժակի շրջանակներում: Կրած կորուստները չեն գերազանցել կապիտալի նախատեսված մասնաբաժինը: Բանկի կապիտալի համարժեքության ցուցանիշը գտնվել է ընդունելի մակարդակում ողջ ժամանակահատվածի համար: 2023թ.-ի առաջին կիսամյակի ընթացքում վնասների հիմնական աղբյուր են հանդիսացել շուկայական և վարկային ռիսկերը. այլ աղբյուրներից կուտակված վնասները չեն ունեցել որևէ զգալի ազդեցություն Բանկի ֆինանսական վիճակի վրա:

# Կառավարման հաշվետվություն

# Ուժեղ թիմ և կորպորատիվ մշակույթ

1. **Բացառիկ կորպորատիվ մշակույթ,** հորիզոնական կառավարում և միայն արժանիքների վրա հիմնված վարձատրության համակարգ
2. **ՀՀ շուկայում ֆինանսական ծառայություններ մատուցող** ամենապրոֆեսիոնալ և տաղանդավոր թիմերից մեկը
3. **Խորհրդին կից կոմիտեներ՝** լավագույն միջազգային չափանիշներին համապատասխան
4. **Փորձառու** և բազմակողմանի միջազգային փորձ ունեցող Խորհրդի անդամներ
5. **Լավագույն փորձի վրա հիմնված** կորպորատիվ կառավարման համակարգ և սկզբունքներ

# Կորպորատիվ կառավարման կառուցվածքը

Կորպորատիվ կառավարումն Ամերիաբանկում միտված է հավասարակշռելու Բանկի բաժնետերերի, Տնօրենների Խորհրդի, գործադիր ղեկավարության և այլ շահագրգիռ անձանց շահերը, սահմանելու կորպորատիվ հարցերով որոշումներ կայացնելու կանոններն ու ընթացակարգերը, ինչպես նաև ներդնելու կորպորատիվ կառավարման այնպիսի համակարգ, որը թույլ կտա ստեղծել վստահության, թափանցիկության և հաշվետվողականության միջավայր ու կնպաստի անհրաժեշտ երկարաժամկետ ներդրումների, ֆինանսական կայունության և աճի խթանմանը:

Ամերիաբանկը շարունակաբար կատարելագործում է իր կորպորատիվ կառավարման համակարգը՝ համապատասխանեցնելով այն միջազգային լավագույն փորձին և կիրառելի օրենսդրական և կանոնակարգային պահանջներին:

Բանկի կորպորատիվ կառավարման համակարգը ներառում է հետևյալ մարմինները. Բաժնետերերի ընդհանուր ժողով (Բանկի կառավարման բարձրագույն մարմինը), Տնօրենների խորհուրդ, Տնօրենների խորհրդին կից կոմիտեներ, Տնօրինություն և Գլխավոր տնօրեն:



# Տնօրենների խորհուրդ

## Անդրեյ Մկրտչյան

**Տնօրենների խորհրդի նախագահ**

Ունի խորհրդատվության ավելի քան 25 տարվա փորձ ներդրումային և կառավարման ոլորտներում, Հայաստանում ներդրումաբանկային ոլորտի հիմնադիրներից է, մի շարք մասնավոր և պետական կազմակերպությունների խորհրդի անդամ:

## Լինդսի Մ. Ֆորբս

**Տնօրենների խորհրդի անդամ**

Ավելի քան 40 տարվա փորձ առևտրային և ներդրումային բանկային գործառնությունների ոլորտում, որից ավելի քան 20 տարին՝ Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկում (ՎԶԵԲ): Նախքան ՎԶԵԲ տեղափոխվելը 13 տարի աշխատել է British Linen Bank-ում՝ Bank of Scotland-ի՝ ներդրումային բանկային գործունեության մեջ մասնագիտացող դուստր ընկերությունում:

## Ֆիլիպ Լինչ

**Տնօրենների խորհրդի անկախ անդամ**

Ավելի քան 30 տարվա փորձ ֆինանսների բնագավառում, որից 20 տարուց ավել՝ Lehman Brothers ընկերությունում ղեկավար պաշտոններում: Զբաղեցրել է Nomura-ի գլխավոր գործադիր տնօրենի պաշտոնը Մերձավոր Արևելքի, Ասիա-Խաղաղ օվկիանոս տարածաշրջանի և Աֆրիկայի գծով, իսկ այժմ Stem Capital Partners ընկերության (ուղղակի ներդրումներով զբաղվող անկախ ընկերություն) հիմնադիր գործընկերն է:



## Ռոբերտ ֆոն Ռեկովսկի

**Տնօրենների խորհրդի անկախ անդամ**

Շուրջ 30 տարվա փորձ համաշխարհային մակարդակով ակտիվների կառավարման ոլորտում, մասնագիտանում է զարգացող շուկաների ներդրումային ֆոնդերում, եղել է «Ֆիդելիթի Ինվեսթմենթս» ընկերության՝ զարգացող շուկաների ռազմավարության բաժնի փոխնախագահը և ընկերության պորտֆելի կառավարիչ:

## Ռիչարդ Փ. Օգդոն

**Տնօրենների խորհրդի անկախ անդամ**

Ավելի քան 30 տարի ֆինանսական ոլորտում, զբաղեցրել է ղեկավար պաշտոններ ներդրումային բանկերում, ակտիվների կառավարման և խորհրդատվական ընկերություններում (UBS Warburg, Uralsib և այլն), ներկայումս SS ոլորտում գործունեություն ծավալող TrData ընկերության գործադիր տնօրենն է:

## Կախա Կիկնավելիձե

**Տնօրենների խորհրդի անկախ անդամ**

Ավելի քան 25 տարվա փորձ առևտրային և ներդրումային բանկերում, երկար ժամանակ եղել է Bank of Georgia Group-ի՝ Վրաստանի առաջատար ֆինանսական հաստատության տնօրենների խորհրդի անկախ անդամ, հետագայում՝ գործադիր տնօրեն: Զբաղեցրել է բարձր ղեկավար պաշտոններ UBS-ում, Rioni Capital-ում և այլ ֆինանսական հաստատություններում:

## Տիգրան Դավթյան

**Տնօրենների խորհրդի անկախ անդամ**

Գրեթե 30 տարվա հարուստ աշխատանքային փորձ ֆինանսական ոլորտում, ղեկավար պաշտոններ է զբաղեցրել մի շարք առևտրային բանկերում և ավելի քան 8 տարի աշխատել է որպես գլխավոր գործադիր տնօրեն: Ղեկավար պաշտոններ է զբաղեցրել նաև ՀՀ Կենտրոնական բանկում և Եվրասիական տնտեսական հանձնաժողովում:

# Տնօրենների խորհրդին կից կոմիտեներ

| | Աուդիտի կոմիտե | Կորպորատիվ կառավարման և ղեկավար անձնակազմի նշանակման կոմիտե | Վարձատրության կոմիտե | Ռիսկերի կառավարման կոմիտե |
|---|---|---|---|---|
| Լինդսի Ֆորբս | **ղեկավար** | | | անդամ |
| Ռոբերտ ֆոն Ռեկովսկի | | անդամ | **ղեկավար** | |
| Ռիչարդ Օգդոն | անդամ | | | **ղեկավար** |
| Կախաբեր Կիկնավելիձե | | **ղեկավար** | անդամ | |
| Տիգրան Դավթյան | անդամ | | | անդամ |
| Ֆիլիպ Լինչ | | անդամ | անդամ | |
| Անդրեյ Մկրտչյան | | | | |

# Տնօրինություն

## Արտակ Հանեսյան

**Տնօրինության նախագահ-գլխավոր տնօրեն**

Ակնառու բանկիր՝ Հայաստանի առևտրային բանկերում ավելի քան 25 տարվա փորձով: Ամերիաբանկի գլխավոր տնօրենն է 2008թ-ից, մինչ այդ ևս զբաղեցնում էր ղեկավար պաշտոններ, այդ թվում՝ գլխավոր տնօրենի տեղակալի և գլխավոր տնօրենի պաշտոններ ՀՀ բանկային համակարգում:

## Հովհաննես Թորոյան

**Ֆինանսական տնօրեն**

Ավելի քան 15 տարվա աշխատանքային փորձ ՀՀ բանկային համակարգում, որից 10 տարին՝ Ամերիաբանկում: Պատասխանատու է եղել ռազմավարության, հետազոտությունների, ակտիվների և պարտավորությունների կառավարման ուղղությունների համար: 2022 թ. 3-րդ եռամսյակում նշանակվել է Ամերիաբանկի ֆինանսական գծով տնօրեն:

## Գագիկ Սահակյան

**Կորպորատիվ և ներդրումային բանկինգի գծով տնօրեն**

Շուրջ 10 տարվա փորձ կորպորատիվ բանկային գործառնությունների և ավելի քան 15 տարվա փորձ՝ կառավարման խորհրդատվական ծառայությունների ոլորտում: Մասնագիտական ուղին սկսել է «Ամերիա» ՓԲԸ-ում, որը մի քանի տարի ղեկավարելուց հետո ստանձնել է կորպորատիվ բանկային գործունեության գծով տնօրենի պաշտոնն Ամերիաբանկում (2010թ-ից):

## Արման Բարսեղյան

**Մանրածախ բանկինգի տնօրեն**

Ավելի քան 20 տարվա փորձ մանրածախ բանկային գործունեության ոլորտում ՀՀ առևտրային բանկերում, որից 15 տարին «HSBC Բանկ Հայաստան»-ում: Ամերիաբանկի մանրածախ բանկինգի տնօրենի պաշտոնն ստանձնել է 2012թ.:



## Արմինե Ղազարյան

**Տաղանդների կառավարման և ծառայությունների գծով տնօրեն**

Շուրջ 20 տարի ՀՀ բանկային համակարգում, որից 15 տարին մարդկային ռեսուրսների կառավարման (ՄՌԿ) ոլորտում: 2008թ-ից զբաղեցնում էր Ամերիաբանկի ՄՌԿ բաժնի ղեկավարի պաշտոնը, իսկ տաղանդների կառավարման և ծառայությունների գծով տնօրենի պաշտոնն ստանձնել է 2019թ-ին:

## Անդրանիկ Բարսեղյան

**Ռիսկերի կառավարման գծով տնօրեն**

Շուրջ 25 տարվա փորձ ֆինանսական հաստատություններում ռիսկերի կառավարման և տեխնոլոգիաների ավտոմատացման ոլորտում: Ամերիաբանկի Ռիսկերի կառավարման կենտրոնի ղեկավարի պաշտոնն ստանձնել է 2009թ-ին:

## Գոհար Խաչատրյան

**Գլխավոր հաշվապահ**

Շուրջ 30 տարվա փորձ ՀՀ բանկային համակարգում, որից 10 տարի Կենտրոնական բանկում և ավելի քան 20 տարի որպես գլխավոր հաշվապահ Ամերիաբանկում:

# Ֆինանսական հաշվետվություններ

# Հաշվեկշիռ

Հազար ՀՀ դրամ

| ՀՈԴՎԱԾ | 2023թ. 2-րդ եռ. | 2022 |
|---|---|---|
| Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ | 123,059,217 | 112,800,903 |
| Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքներ | 12,776,472 | 10,721,168 |
| Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ | 34,956,880 | 57,363,607 |
| Միջոցների կարճաժամկետ տեղաբաշխում դրամական շուկայում | 89,698,603 | 142,051,394 |
| Հաճախորդներին տրված վարկեր և փոխատվություններ | 839,915,513 | 735,543,120 |
| Մինչև մարումը պահվող ներդրումներ | 110,225,524 | 156,701,885 |
| Հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ | 23,690,803 | 22,581,859 |
| Այլ ակտիվներ | 17,693,306 | 14,065,870 |
| **Ընդամենն ակտիվներ** | **1,252,016,318** | **1,251,829,806** |
| Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական պարտավորություններ | - | 69,563 |
| Պարտավորություններ բանկերի նկատմամբ | 54,387,328 | 66,621,817 |
| Հաճախորդների ընթացիկ հաշիվներ և ավանդներ | 837,256,441 | 784,634,192 |
| Այլ փոխառու միջոցներ | 26,007,723 | 58,124,688 |
| Ստորադաս փոխառություններ | 27,963,304 | 28,155,324 |
| Այլ պարտավորություններ | 129,811,041 | 142,172,677 |
| **Ընդամենը պարտավորություններ** | **1,075,425,837** | **1,079,778,261** |
| Բաժնետիր. կապիտալ և էմիս. եկամուտ | 54,741,241 | 54,618,878 |
| Վերագնահատման պահուստ | (1,029,462) | (1,473,167) |
| Չբաշխված շահույթ | 122,878,702 | 118,905,834 |
| **Կապիտալ** | **176,590,481** | **172,051,545** |



*Առանց արժեզրկման մասհանումների

# Եկամուտ և ծախսեր

Հազար ՀՀ դրամ

| ՀՈԴՎԱԾ | 2023թ. 2-րդ եռ. | 2022թ. 2-րդ եռ. |
|---|---|---|
| **Զուտ տոկոսային եկամուտ** | **34,135,393** | **21,811,141** |
| **Զուտ եկամուտ միջնորդավճարներից և այլ նմանատիպ եկամուտ** | **6,393,962** | **3,650,801** |
| Զուտ շահույթ/(վնաս) առևտրային գործառնություններից | 11,536,492 | 14,657,620 |
| Այլ գործառնական եկամուտ/(ծախս) | (3,061,652) | (1,707,718) |
| **Գործառնական եկամուտ** | **49,004,195** | **38,411,844** |
| Կորուստներ արժեզրկումից | (2,846,806) | 116,406 |
| Անձնակազմի ծախսեր | (14,690,085) | (11,160,341) |
| Ընդհանուր վարչ. ծախսեր | (4,850,030) | (3,852,414) |
| **Շահույթ/(վնաս) նախքան հարկումը** | **26,617,274** | **23,515,495** |
| Շահութահարկ | (4,944,406) | (4,405,918) |
| **Զուտ շահույթ/(վնաս)** | **21,672,868** | **19,109,577** |

# ՀՀ ԿԲ-ի տնտեսական նորմատիվներ

| ՀՈԴՎԱԾ | 2021 | 2022 | 2023թ. 2-րդ եռ. | ՀՀ ԿԲ պահանջ | Խախտում |
|---|---|---|---|---|---|
| Նվազագույն կանոնադրական կապիտալ (հազ. ՀՀ դրամ) | 54,385,935 | 54,414,765 | 54,466,380 | 50,000 | Չկա |
| Նվազագույն ընդհանուր կապիտալ (հազ. ՀՀ դրամ) | 143,832,191 | 183,483,587 | 205,209,444 | 30,000,000 | Չկա |
| Ն1.2՝ Ընդհանուր կապիտալ/ռիսկով կշռված ակտիվներ | 15.29% | 17.40% | 17.70% | 12.00% | Չկա |
| Ն2.1՝ Բարձր իրացվելի ակտիվներ/ընդհանուր ակտիվներ | 31.84% | 30.42% | 28.77% | 15.00% | Չկա |
| Ն2.1.1՝ Առաջին խմբի արժույթով բարձր իրացվելի ակտիվներ/առաջին խմբի արժույթով ընդհանուր ակտիվներ | 33.46% | 30.91% | 32.92% | 4.00% | Չկա |
| Ն2.2՝ Բարձր իրացվելի ակտիվներ/ցպահանջ պարտավորություններ | 110.18% | 75.48% | 70.04% | 60.00% | Չկա |
| Ն2.2.1՝ Առաջին խմբի արժույթով բարձր իրացվելի ակտիվներ/առաջին խմբի արժույթով ցպահանջ պարտավորություններ | 121.88% | 74.41% | 78.14% | 10.00% | Չկա |
| Ն3.1՝ Մեկ փոխառուի գծով ռիսկի առավելագույն չափ | 11.75% | 17.36% | 17.63% | 20.00% | Չկա |
| Ն3.2՝ Խոշոր փոխառուների գծով ռիսկի առավելագույն չափ | 147.15% | 95.47% | 102.03% | 500.00% | Չկա |
| Ն4.1՝ Բանկի հետ կապված մեկ անձի գծով ռիսկի առավելագույն չափ | 3.44% | 1.62% | 2.10% | 5.00% | Չկա |
| Ն4.2՝ Բանկի հետ կապված բոլոր անձանց գծով ռիսկի առավելագույն չափ | 10.28% | 8.25% | 10.65% | 20.00% | Չկա |
| ՀՀ ԿԲ-ում տեղաբաշխվող պարտադիր պահուստների նվազագույն չափ<br>ՀՀ դրամ<br>Արտարժույթ | X | X | X | 4%<br>18% | Չկա |
| Արժութային դիրքի և բանկի ընդհանուր կապիտալի առավելագույն հարաբերակցությունը | 0.07% | 2.58% | 2.21% | 10.00% | Չկա |

## Ֆինանսական

Հաշվետվություններ և կից ծանոթագրություններ:

այստեղ

# Հաշվետու թողարկողի պատասխանատու առձանց հայտարարություն

«ԱՄԵՐԻԱԲԱՆԿ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

Գտնվելու վայրը՝ ՀՀ, ք. Երևան, Վ. Սարգսյան 2,
Հեռախոս՝ (+37410) 56 11 11, Ֆաքս՝ (+37410) 51 31 33

## ՀԱՇՎԵՏՈՒ ԹՈՂԱՐԿՈՂԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ԱՆՁԱՆՑ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Սույնով հաստատում ենք, որ մեր լավագույն տեղեկացվածության համաձայն՝

1. «Ամերիաբանկ» ՓԲԸ /այսուհետ՝ Թողարկող/՝ 2023թ. առաջին կիսամյակի հաշվետվությունում ներառված տեղեկությունները ճշգրիտ և լիարժեք են և բոլոր էական առումներով համապատասխանում են «Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենքի և ՀՀ ԿԲ Կանոնակարգ 4/04-ի պահանջներին:

2. Ներկայացված՝ 2023թ. երկրորդ եռամսյակի աուդիտ չանցած ֆինանսական հաշվետվությունները կազմված են Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների համաձայն և, բոլոր էական առումներով, ճշգրիտ և լիարժեք ձևով արտացոլում են Թողարկողի ակտիվների և պարտավորությունների, ֆինանսական վիճակի, եկամուտների և ծախսերի իրական պատկերը 2023թ. հունիսի 30-ի դրությամբ, ինչպես նաև Թողարկողի գործունեության արդյունքներն ու դրամական միջոցների հոսքերը հաշվետու ժամանակաշրջանի համար:

| | | |
|---|---|---|
| **Արտակ Հանեսյան** | Տնօրինության նախագահ - Գլխավոր տնօրեն | |
| (անուն, ազգանուն) | (պաշտոն) | (ստորագրություն) |
| **Հովհաննես Թորոյան** | Ֆինանսական տնօրեն | |
| (անուն, ազգանուն) | (պաշտոն) | (ստորագրություն) |
| **Աննա Վարդանյանց** | Տնօրինության անդամի ժ/պ | |
| (անուն, ազգանուն) | (պաշտոն) | (ստորագրություն) |
| **Արման Բարսեղյան** | Մանրածախ բանկինգի տնօրեն | |
| (անուն, ազգանուն) | (պաշտոն) | (ստորագրություն) |

AMERIABANK

| | | |
|---|---|---|
| **Անդրանիկ Բարսեղյան** | Ռիսկերի կառավարման գծով տնօրեն | |
| (անուն, ազգանուն) | (պաշտոն) | (ստորագրություն) |
| **Գագիկ Սահակյան** | Կորպորատիվ և ներդրումային բանկինգի գծով տնօրեն | |
| (անուն, ազգանուն) | (պաշտոն) | (ստորագրություն) |
| **Գոհար Խաչատրյան** | Տնօրինության անդամ, Գլխավոր հաշվապահ | |
| (անուն, ազգանուն) | (պաշտոն) | (ստորագրություն) |